ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/82

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Արենիի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցում, Ագարակաձոր, Ելփին, Խաչիկ և Ռինդ բնակավայրերում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 10.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել.

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը,

2. Չեղյալ հայտարարել «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը և վերահայտարարել օրենքի պահանջներին համապատասխան առանց հրավերի 1-ին մասի 7-րդ կետի հայտի ապահովման պահանջի:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.07.2020թ.-ին:

13.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/82 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

21.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ն 10.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս/թ հուլիսի 03-ին հայտարարել է «Ագարակաձոր, Երիին, Խաչիկ, Ռինգ բնակավայրերում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքների ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 10.07.2020թ. ժամը 15.00:

Պաուվիրատուն հրավերի 1-ին մասի 7-րդ կետով պահանջել է, որպեսզի մասնակիցները ներկայացնեն

Հայտի ապահովում.

7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

7.2 Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում.

բ. Մասնակիցը հրաժարվում է որևէ չափաբաժնից կամ պայմանագիր կնքելուց կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման գումարի չափով:9

7.3 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց

կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Մենք գտնում ենք, որ վերոհիշյալ պահանջը՝ հայտի ապահովման ներկայացման ներկայացնելը օրենքի խախտում է, քանի որ տվյալ ընթացակարգի համար գումար նախատեսված չի: Պատվիրատուն սահմանել է.

Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այսինքն գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում****												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*Ընդամենը*
1	*45241140*	*Ագարակաձոր բնակավայր,3-րդ փողոցում 0,5կմ և7-րդ փողոցում 1,5կմ ոռոգման ջրագծերի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
2	*45241140*	*Ելփին բնակավայր /Սարի թաղ/ թաղամասի ոռոգման ջրագծի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
3	*45241140*	*Խաչիկ բնակավայր Մայր ջրագծից սկիզբ առնող ոռոգման ջրագծի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
4	*45241140*	*Ռինդ բնակավայր<<Անաջառու>> հանդամասից դեպի հին գյուղ ոռոգման ջրագծի արտաքին ցանցի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՊԱԼԱՌՈՒ***
---	---
/ստորագրություն/	*/ստորագրություն/*
Կ.Տ	*Կ.Տ*

Այսպիսով գտնում ենք, որ հանձնաժողովը Պատվիրատուն օրենքի խախտումով է հայտարարել սույն ընթացակարգը, քանի որ հրավերի 1-ին մասի 7-րդ կետով է պահանջել հայտի ապահով, միևնույն ժամանակ չունենալով ֆինանսական միջոցներ:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել.

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը,

2. Չեղյալ հայտարարել «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը և վերահայտարարել օրենքի պահանջներին համապատասխան առանց հրավերի 1-ին մասի 7-րդ կետի հայտի ապահովման պահանջի:

3. <u>Արենիի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10418-2020 գրությամբ դիմել է Արենիի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի կողմից 10.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 15.07.2020թ.-ին թիվ 583 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 13 հուլիսի 2020թ.-ի N ԲՔԱ-ԼՕ/2/10418-2020 գրության հայտնում ենք, որ «ԱՐԵՆԻ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով հրապարակված հրավերում, գնումների քարտուղարի կողմից թյուրիմացաբար չի հանվել հայտի ապահովման կետը, սակայն մեր կողմից հրապարակված հրավերում հայտի ապահովման ներկայացման

վերաբերյալ, փողոցակում կա բացատրություն, ըստ որի պարզորոշ երևում է, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով կատարվող գնումների ժամանակ հայտերի բացման նիստում չի պահանջվում հայտի ապահովում: Մասնավորապես 10.07.2020 թվականին ժամը 15:00-ին հայտերի բացման և գնահատման նիստում հայտ ներկայացված մասնակիցների կողմից չի ներկայացվել և գնահատող հանձնաժողովի կողմից չի պահանջվել հայտի ապահովումներ:

Ձեզ ենք ուղարկում գնահատող հանձնաժողովի N 1 և N 2 արձանագրությունները, գրանցամատյանը, «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-07/ 20» ծածկագրով գնանշման հարցման հրավերը և տեղեկացնում ենք, որ գնման գործընթացը կասեցնելու դեպքում համայնքապետարանը և մրցույթում հաղթած կազմակերպությունները կկրեն ֆինանսական վնասներ և հնարավոր է, որ սահմանված ժամկետներում չկարողանան իրականացնել կամ ոչ պատշաճ կերպով կատրել պահանջվող աշխատանքները:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Արենիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Ագարակաձոր, Ելփին, Խաչիկ և Ռինդ բնակավայրերում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարվել է «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 10.07.2020թ.-ին:

iii. Հրավերով սահմանվել է, որ սույն գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), իսկ պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այսինքն գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

iv. Հրավերի 1-ին մասով 7-րդ բաժնով սահմանվել է հետևյալը.

7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

7.2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում.

բ. Մասնակիցը հրաժարվում է որևէ չափաբաժնից կամ պայմանագիր կնքելուց կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման գումարի չափով:9

7.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

7.4-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերով հաստատվել է նաև թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը հետևյալ ձևով՝

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում****													
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*Ընդամենը*
1	*45241140*	*Ագարակաձոր բնակավայր,3-րդ փողոցում 0,5կմ և7-րդ փողոցում 1,5կմ ոռոգման ջրագծերի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
2	*45241140*	*Ելփին բնակավայր /Սարի թաղ/ թաղամասի ոռոգման ջրագծի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
3	*45241140*	*Խաչիկ բնակավայր Մայր ջրագծից սկիզբ առնող ոռոգման ջրագծի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*
4	*45241140*	*Ռինդ բնակավայր<<Անաջառու>> հանդամասից դեպի հին գյուղ ոռոգման ջրագծի արտաքին ցանցի կառուցում*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*	*... %*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի կողմից 10.07.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, և կնքվելիք պայմանագրի

ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Վերոնշյալ նորմերի լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Որպես բացառություն Կարգով սահմանվել են դեպքեր, երբ հրավերով չի պահանջվում, իսկ մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացվում: Դրանք են այն դեպքերը, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, երբ գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը (10 մլն. ՀՀ դրամը), կամ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արենիի համայնքապետարանի կողմից Ագարակաձոր, Ելփին, Խաչիկ և Ռինդ բնակավայրերում ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարված «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 10.07.2020թ.-ին:

Հրավերով սահմանվել է, որ սույն գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), իսկ պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այսինքն գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Հրավերի 1-ին մասով 7-րդ բաժնով սահմանվել է հայտի ապահովումը ներկայացնելու կարգը և պահանջները:

Ամփոփելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ սահմանելը հակասում է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված պահանջներին, որպիսի խախտումն ուղարկիորեն հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված հիմնարար դրույթների խախտմանը, ինչով պայմանավորված խախտվում է մասնակիցների՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը, ուստի, նման պայմաններում, գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հակոբ Ռազմիկի Առաքելյան» Ա/Ձ-ի կողմից 10.07.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/82 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԱՐԵՆԻՀ-ԳՀԱՇՁԲ 07/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**